Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆՆԵՐ

Նոր-Ջուղայի Հայոց Ազգ. դպրոցների
աշակերտ-աշակերտուհիների համար

եւ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.-Ջ. Հ. Ազգ. դպր. աշակերտ-ուհիների
ծնողների ու խնամակալների համար։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Նոր-Ջուղայի Հ. Ազգային դպրոցների
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1912

…ան Ս. Ամենափրկիչ Վանքի

ՋՈՒՂԱ – ՍՊԱՀԱՆ

372
Կ-21

372
1-21
1
10 NOV 2011

ԿԱՆՈՆՆԵՐ

Նոր-Ջուղայի Հայոց Ազգ. դպրոցների
աշակերտ-աշակերտուհիների համար

ԵՒ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.-Ջ. Հ. Ազգ. դպր. աշակերտ-ուհիների
ծնողների ու խնամակալների համար։

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Նոր-Ջուղայի Հ. Ազգային դպրոցների
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1912

Տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

05. 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՄԱՐ

5347-2011

Ա.

ԿԱՆՈՆՆԵՐ

Նոր-Զուղայի Հ. Ա.զգ. դպրոցների աշակերտ—աշակերտուհիների համար

1. Դասերը, կամ առաւօտեան սերտողութիւնը սկսուելիս՝ բոլոր աշակերտ-ուհիները դպրոցում պատրաստ պիտի լինին։

2. Մէկ, կամ մի քանի օրով, կամ երկար ժամանակ բացակայող աշակերտը՝ բացակայութիւնից յետոյ դպրոց գալիս՝ դասարանական դաստիարակին պիտի յայտնէ բացակայութեան պատճառը, կամ պիտի ներկայացնէ ծնողի, կամ խնամակալի գրաւոր բացատրութիւնը։

Ծանօթ.— Բացակայութեան յարգելի պատճառ համարւում է միայն հիւանդութիւնը. սակաւ դէպքերում՝ նաև մի քանի այլ հանգամանքներ՝ կօշիկների, կամ զգեստի անկարգ վիճակ, պակասութիւն նայն։

3. Ստիպողական ու արտակարգ պարագաներում աշակերտը կարող է դպրոցից բացակայել միայն տեսչի թոյլտուութեամբ։

Ծանօթ.— Առանց յարգելի պատճառի ուշացող, կամ բացակայող աշակերտն արժանանում է յանդիմութեան, կամ պատժի։

4. Դասից ուշացող աշակերտ ուՀին լռութեամբ դասարան պիտի մտնէ և սպասէ դասատուի արտօնութեան՝ նստելու համար։

5. Առանց յարգելի պատճառի շարունակաբար ըացակայող և յառաջադիմութեամբ ու վարքով անգոՀացուցիչ աշակերտը արձակւում է դպրոցից։

6. Զանգը տալուն պէս՝ աշակերտները կարգ պիտի կանգնեն և Հանդարտ դասարան պիտի մտնեն՝ մինչև ուսուցչի ներս մտնելը պատրաստելով Հարկաւոր դասական պիտոյքները։

Ծանօթ.— Առաւօտեան առաջին դասին դասարան մտնելուց առաջ՝ դպրոցների աշակերտ-ուՀիները խմբովին երգում են Տէրունական աղօթքը։

7. Առանց դասատու ուսուցչի արտօնութեան և նախքան դասատուի դասարանից դուրս գալը՝ աշակերտ-ուՀիները երբէք պէտք չէ խռնուեն դասարանում, կամ դուրս գան դասարանից։

8. Ամեն անգամ դասի սկզբին դասատուն դասարան մտնելիս՝ աշակերտ-ուՀիները ոտքի են կանգնում՝ իբր նշան յարգանքի ու բարեւելու։

9. Աշակերտ-ուՀիները նոյնպէս ոտքի պիտի կանգնեն, երբ դասարան մտնէ որևէ

պաշտօնական անձ, կամ ընդՀանրապէս այցելու։

10. Տան Համար արուած աշխատանքներից միայն նրանք կարելի է դպրոցում կատարել, որոնց Համար տէրը յարմարութիւններ պակասում են. դրա Համար կանխաւ թոյլտուութիւն պիտի ստանալ դասատուից ու վերակացուից։

11. Լաւ եղանակին աշակերտ-ուՀիները դասամիջոցներին բաց դուրս պիտի լինին, իսկ վատ (անձրև, ձիւն և այլն) եղանակին՝ միջանցքներում, ուր սակայն խստիւ արգելւում է վազել, խաղալ, աղմկել ու փոշի բարձրացնել։

Ծանօթ.— Դասամիջոցներին դասարաններում պիտի մնան միայն օրապահները։— Տկար երեխաները՝ դասամիջոցին դասարանում մնալու Համար՝ թոյլտուութիւն պիտի ստանան դասատուից։

12. Դասամիջոցներին աշակերտներին խստիւ արգելւում է փողոց դուրս գալ։ ԱնՀրաժեշտ գործի Համար մի քանի րոպէով տուն գնացողները թոյլտուութիւն պիտի խնդրեն վերակացուից։

13. Դասարանական դաստիարակի նշանակած կարգով ու նրա ՀրաՀանգներին Հա-

միայն՝ դասարանի աշակերտ-աշակերտուհի-
ները օրապահութիւն պիտի անեն 2 օրով, կամ
մէկ շաբաթով։

Ծանօթ.— *Օրապահները՝ ա) Սովորականից վաղ պիտի գան դպրոց։ բ) Պիտի պատրաստեն կաւիճ և մաքուր պահեն գրատախտակը. դասատուի վճռութեամբ՝ ժամանակին պիտի բերեն դասին անհրաժեշտ եղող քարտէզները, իրերը, պատկերները և այլն։ գ) Դասարանի յատակը, գրասեղաններն անմաքուր լինելու դէպքում, կամ ընդհանրապէս դասարանն անկարգ վիճակի մէջ լինելիս՝ պէտք եղածը անմիջապէս պիտի յայտնեն վերակացուին։ դ) Պիտի հսկեն, որ դասարանում չկորչեն գրքեր, տետրակներ և ուրիշ առարկաներ։ ե) Վերջին դասից յետոյ, երբ աշակերտները տուն են գնում, պիտի նայեն գրասեղանների դղրոցներին. եթէ մնացած իր լինի, պիտի վերցնեն ու յանձնեն տիրոջը, իսկ վերջինիս չճանաչելու դէպքում՝ վերակացուին։*

14. 5րդ դասից յետոյ, երբ դասարանների մեծագոյն մասում դասերն աւարտւում են, աշակերտ-ուհիները նախքան տուն գնալը՝ պիտի հաւաքուին միջին սրահներում և կարգով ու վերին աստիճանի լռութեամբ կանգնած՝ պիտի երգեն, կամ ասեն Տէրունական աղօթքն, որից յետոյ հանդարտ կարգով տուն պիտի գնան։

15. Խստիւ արգելւում է տուն գնալիս փողոցներում խաղալ, անկարգութիւն անել, կամ ընդհանրապէս դանդաղել։

Ա ծանօթ.— *Աշակերտները դպրոցից տուն պիտի գնան թաղերի կարգով բաժանուած։*

Բ ծանօթ.— *Աշակերտ-ուհիներին խստիւ արգելւում է ընդհանրապէս փողոցներում խաղալ, աննպատակ թափառել, կամ դռներին պարապ-սարապ կանգնել։*

16. Տրուած դասերը տանը կանոնաւորապէս չպատրաստող աշակերտը արժանանում է յանդիմանութեան ու պատժի։

17. Աշակերտ-ուհիները (Գ բաժ. ըսկսած) դպրոցական գրադարանից կարող են վերցնել ընթերցանութեան գրքեր։

Ծանօթ.— *ա) Ընթերցանութեան գրքեր տրւում են շաբաթը մէկ անգամ։ բ) Դաստիարակի, կամ դասարանի ընթերցանութեան գործը վարող ուսուցչի կողմից տրուող՝ կարդացած նիւթին վերաբերեալ հարցերին աշակերտ-ուհին պիտի կարողանայ յաջող պատասխաններ տալ։ գ) Գիրքը պիտի վերադարձնէ այնպէս, ինչպէս ստացել է. աշակերտը պարտաւոր է փչացրած, կամ կորցրած գրքի գինը անյապաղ վճարել։*

18. Աշակերտ-ուհիները դպրոց պիտի յաճախեն դպրոցի Վարչութեան կողմից որոշուած համազգեստով և մաքուր հագնուած։ Աշակերտները կարճ խուզել պիտի տան իրանց

մաղերը. իսկ աշակերտուհիները պիտի սանրուին որոշուած պարզ ու վայելուչ ձևով։

Ծանօթ.— Աշակերտուհիներին խստիւ արգելում է զարդարանք կրելը։

19. Աշակերտ-ուհիներն ամեն տեղ ու ամենքի նկատմամբ քաղաքավարի պիտի լինին՝ յարգանքով— իրանցից մեծերի հետ, սիրով ու քաղցրութեամբ— հասակակիցների ու իրանցից փոքրերի հետ։

Ա ծանօթ.— Աշակերտ-ուհիները ամենայն ճշտութեամբ պիտի կատարեն դպրոցների տեսչի, ուսուցիչների ու վերակացուների պատուէրները։

Բ ծանօթ.— Խստիւ արգելում է իրար հայհոյել, վիրաւորանք հասցնել, ծեծել և ուրիշ ամեն կարգի կոպտութիւններ։

Գ ծանօթ.— Աշակերտ-ուհիները զանցառութեան, անկարգութեան ու վատ վարքի համար կ՚արժանան դիտողութեան ու պատժի։

20. Թեմիս Գ. Տ. Առաջնորդին, նրա Տ. Փոխանորդին, դպրոցների հոգաբարձութեան անդամներին, տեսչին, կամ նրա օգնականին, ուսուցիչներին, վարժուհիներին, վերակացուներին ու հայ հոգևորականութեան անդամներին որևէ տեղ հանդիպելիս՝ աշակերտ-ուհիները անպայման պիտի բարևեն՝ քաղաքավարութեամբ ու յարգանքով։

21. Աշակերտ-ուհիները ներկայացման,

դասախօսութեան, կամ ուրիշ որևէ հասարակական համախմբման, կամ հանդէսի ներկայ գտնուելու համար՝ թոյլտուութիւն պիտի խնդրեն դպրոցների տեսչից։

22. Որևէ գանգատ ունենալիս՝ աշակերտ-ուհիները կարող են դիմել կամ վերակացուին, կամ դասարանական դաստիարակին, իսկ ծանրակշիռ պարագայում՝ դպրոցների տեսչին։

23. Որևէ դպրոցական իր փչացնելու դէպքում՝ աշակերտ-ուհին պարտաւոր է անմիջապէս վճարել փչացրածի արժէքը՝ համաձայն տեսչի որոշման։

24. Աշակերտ-ուհիները որոշուած տօն օրերին վերակացուների ու դաստիարակների առաջնորդութեամբ եկեղեցի պիտի գնան։

Ծանօթ.— ա) Աշակերտ-ուհիները եկեղեցում իրանց վերին աստիճանի լուռ ու վայելուչ պիտի պահեն, տեղերը չպիտի փոխեն և այլն։ բ) Եկեղեցուց դուրս գալու համար՝ աշակերտ-ուհին թոյլտուութիւն պիտի ստանայ վերակացուից։

25. Եկեղեցում երգող երգիչ աշակերտ-ուհիները կիւրակէ, տօն և ընդհանրապէս խմբապետի որոշած օրերին ճիշտ ժամին անպայման ներկայ պիտի լինին պատարագին։

Ա ծանօթ.— Երգիչներն եկեղեցում իրանց պիտի պահեն խիստ պարկեշտ ու լուռ. նրանք միայն խմբապետի չափին պիտի նայեն։

Բ ծանօթ.— Եկեղեցում իրան անկարգ պահող, կամ առանց յարգելի պատճառի պատարագին չներկայացող երգիչը արժանանում է խիստ յանդիմանութեան ու պատժի։

26. Աշակերտ-ուհիները հաղորդուում են ամեն տարի Ծաղկազարդի կիւրակէին։

Բ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր-Ջուղայի Ազգային դպրոցների սաների ծնողների ու խնամակալների համար

1. Նոր-Ջուղայի Կենտրոնական, Գ.-Քանանեան և Ս. Կատարինեան ազգային դպրոցներում ընդունուում են երթևեկ աշակերտ-ուհիներ։

Ծանօթ.— Նոր-Ջուղայի Հոգևոր դպրանոցն ու Ս. Կատարինեան որբանոցն ընդունում են սահմանափակ թուով դիշերօթիկներ։

2. Դպրոցներում ընդունելութիւնները սկսուում են օգոստոս 25-ից, իսկ դասերը՝ սեպտեմբեր 1-ից։

Ա. ծանօթ.— Այս կամ այն դասարանի համար այլևս ընդունելութիւններ չեն կատարուում, եթէ այդ դասարանի աշակերտ-ուհիների թիւը հասած է լինում որոշած նորմայի առաւելագոյն թուին։

Բ ծանօթ. — Գ.-Քանանեան մանկապարտէզում աշակերտ-ուհիներ ընդունուում են 4 տարեկան հասակից, իսկ դպրոցներում՝ 7 տարեկանից։

3. Ծնողը, կամ խնամակալն իր զաւակին, կամ խնամեալին դպրոց յանձնելիս՝ պիտի դիմէ դպրոցների տեսչին յատուկ խըն-

դրագրով՝ ներկայացնելով ծննդեան ու ծաղկի պատուասման վկայականներ։

Ա. ծանօթ.— Ենդրագիրն ու վկայագիրը պիտի գրուին դպրոցի կողմից տրուող բլանկների վրայ։

Բ. ծանօթ.— Այն ծնողները, կամ խնամակալներն, որ ուզում են իրանց զաւակը, կամ խնամեալը ձրիավարժ ընդունուէ, կամ ձրիաբար ստանայ զգեստ ու դպրոցական պիտոյք, պիտի ներկայացնին նաև չքաւորութեան յատուկ վկայական տեղւոյս Հոգևոր Իշխանութիւնից։

4. Հոգաբարձութիւնն է որոշում աշակերտուհիների թոշակատու, կամ ձրիավարժ լինելը։

Ծանօթ.— Գիշերօթիկ աշակերտներն էլ լինում են թոշակատու և ձրիավարժ։— Այդ որոշում է «Նոր-Զուղայի Հոգևոր դպրանոցի» Վարչութիւնը՝ համաձայնութեան գալով Ազգային դպրոցների Վարչութեան հետ։

5. Թոշակագրամի քանակը որոշում է Հոգաբարձութիւնը՝ դասարանների կարգով, կամ ըստ կարողութեան։

6. Թոշակը պիտի հատուցանել երկու նուագով՝ Ա. մասը՝ մինչև հոկտ. 15-ը, իսկ Բ մասը՝ մինչև փետր. 15-ը։

7. Թոշակագրամը վճարելու պարագային երբեք նշանակութիւն չունի՝ թէ աշակերտուհին այդ կիսամեակում որքան ժամանակ է դպրոց յաճախել։

8. Որոշեալ ժամանակամիջոցում թոշակագրամը լիովին չհատուցանող աշակերտուհին արձակւում է դպրոցից։

Ծանօթ.— Նա կարող է կրկին ընդունուել, երբ լիովին հատուցած կը լինի թոշակագրամը։

9. Դպրոցների ու մանկապարտէզի բոլոր աշակերտներն ու աշակերտուհիները անպայման պիտի հագնեն դպրոցական Վարչութեան կողմից որոշուած ձեւի ու գոյնի համազգեստ։

10. Աշակերտուհիները պիտի ունենան դպրոցներում գործածուող բոլոր դասագրքերն ու դասական միւս պիտոյքները, բացի Դրանցից, որ տեղումս հնարաւոր չէ գտնել։

11. Երեք տարի նոյն դասարանում մնացող աշակերտուհին արձակւում է դպրոցից։

12. Ծնողներն ու խնամակալները պիտի ծանօթանան իրանց զաւակի, կամ խնամեալի առաջադիմութեանը՝ լուրջ ուշադրութիւն դարձնելով դպրոցների Ուսումնական Վարչութեան կողմից տրուող Ա. և Բ կիսա-

մեակների «պատկեր յառաջադիմութեան» ներին։

Ծանօթ.— Դպրոցի տեսչից բանաւոր, կամ գրաւոր հրաւէր ստանալիս՝ ծնողներն ու խնամակալները նեղութիւն պիտի յանձն առնեն դպրոց գալ՝ իրանց զաւակների, կամ խնամեալների մասին պէտք եղած տեղեկութիւններն ստանալու։

13. Ծնողները, կամ խնամակալները վերաքննութիւն ունեցող աշակերտ-ուհուն պատրաստել պիտի տան ամառուայ արձակուրդին։

Ծանօթ.— Անպատրաստ վերաքննելիները կրկին նոյն դասարանում կը մնան։

14. Վարակիչ հիւանդութեամբ (ծաղիկ, բկացաւ, տիֆ և այլն) տկարացած երեխաները մինչև կատարելապէս առողջանալը պիտի դադարեն դպրոց գալ. Դրանք կը վերսկսեն յաճախումը՝ ներկայացնելով բժշկի կողմից տրուած վկայական։

Ծանօթ.— Բժշկի վկայականը պիտի յանձնել դասարանական դասախարակին։

15. Ազգային դպրոցներում սովորական ձևական քննութիւնները վերացուած են. լինում են միայն հարցաքննութիւններ 6րդ դասարանում՝ նոյն դասարանի բոլոր առարկաներից և միւս դասարաններում՝ միայն

աւարտուող և յաջորդ ուսումն. տարեշրջանում դադարող առարկաներից։

16. Դպրոցներում դասերը դադարում են յունիս 10-ին։

17. Դպրոցներում ու մանկապարտէզում դասեր լսելու համար՝ այցելուները արտօնութիւն են խնդրում տեսչից և ապա դասատուի համաձայնութեամբ ներկայ լինում դասին։

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

Այն «Կանոններն» ու «Տեղեկութիւնները» հաստատուած են Ազգ. դպրոցների 1911—1912 ուսումն. տարեշրջանի Մանկավարժական ու Հոգաբարձական ժողովների կողմից։

Ազգային դպրոցների տեսուչ՝
Ա. ԳԵՐԱՍԻՄԵԱՆ

1 մայիսի, 1912.
Զուզա—Սպահան

200

Հայաստանի Ազգային գրադարան
NL0424770

50. 405